

Քաղաքացիական կրթություն

Մեթոդական ուղեցույց
ուսուցիչների համար



DEMOCRACY STARTS WITH YOU



THE PROJECT IS FUNDED
BY THE EUROPEAN UNION

Սիրելի ուսուցիչներ,

«Ժողովրդավարությունը սկսվում է քեզնից» կոչվող մեր համատեղ ծրագիրը նպատակ ունի երեխաներին տալ գիտելիքներ ու հմտություններ, որոնք կօգնեն նրանց հասկանալ, թե ինչպես է գործում ժողովրդավարությունը, եւ դառնալ ակտիվ քաղաքացիներ:

Կոնրադ Ադենաուեր հիմնադրամը, Էդուարդո Ֆրեյ հիմնադրամը, Երեւանի, Թբիլիսիի եւ Բաքվի Քաղաքական դասընթացների դպրոցները համատեղ մտահղացել են այս գաղափարը եւ կարողացել են Եվրամիության տրամադրած միջոցներով իրականացնել «Ժողովրդավարությունը սկսվում է քեզնից» ծրագիրը: Ծրագրին լավագույնս աջակցել է Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարությունը: Կարելորագույն դերակատարները, սակայն, դուք՝ ուսուցիչներդ եք:

Աշակերտների հետ ամենօրյա աշխատանքում դուք սահմանում եք այն ուղենիշները, որոնց վրա քայլ առ քայլ երեխաները ձեւավորում են ժողովրդավարության իրենց ընկալումը: Ուղղակի իմաստով՝ դուք եք, որ բացատրում եք աշակերտներին ժողովրդավարության գիտական իմաստը, ժողովրդավարության պատմությունը եւ այն, թե ինչպես է ձեր երկրում գործում ժողովրդավարական համակարգը: Անուղղակիորեն, սակայն, ժողովրդավարության մասին երեխաների պատկերացումները մեծապես կախված են նաեւ նրանից, թե ինչպես եք դուք սովորեցնում նրանց: Հետեւաբար, այս գրքում հիմնական ուշադրությունը կենտրոնացված է երեխաների քաղաքացիական կրթության մեթոդների վրա:

Ընդունեք, խնդրում եմ, երախտագիտությունս աճող սերնդի հոգու եւ գիտակցության մեջ ժողովրդավարության ուղենիշները հաստատելուն ուղղված ձեր կատարած աշխատանքի համար: Ընդունեք, խնդրում եմ, երախտագիտությունս քաղաքացիական կրթության բնագավառում ձեր փորձը մեզ հետ կիսելու պատրաստակամության համար: Հուսով եմ, որ այս աշխատանքային ձեռնարկը կոգետորի եւ կքաջալերի ձեզ շարունակելու ձեր ուղին երեխաների քաղաքացիական կրթության բնագավառում:

Կատյա Զրիստինա Փլաթե

«Ժողովրդավարությունը սկսվում է քեզնից» ծրագրի տնօրեն

Բովանդակություն

1	Ուսուցման ուղղվածությունը	Վարքագիծ	6
1.1	Ո՞րն է ուսուցման նպատակը		7
1.2	Մեթոդ Ա – Դերային խաղեր		8
1.3	Մեթոդ Բ – Սոկրատեսյան երկխոսություն		10
2	Ուսուցման ուղղվածությունը	Մտածողություն	12
2.1	Ո՞րն է ուսուցման նպատակը		13
2.2	Մեթոդ Գ – Պլենար զեկուցում		14
2.3	Մեթոդ Դ – Երեւակայություն		16
3	Ուսուցման ուղղվածությունը	Չարգացում	18
3.1	Ո՞րն է ուսուցման նպատակը		19
3.2	Մեթոդ Ե – Քաղաքական մանիֆեստ		20
3.3	Մեթոդ Զ – Գտիր «քոնը»		22

4	Ուսուցման ուղղվածությունը	Համագործակցություն	24
4.1	Ո՞րն է ուսուցման նպատակը		25
4.2	Մեթոդ Է – Քննարկում բրիտանական խորհրդարանում		26
4.3	Մեթոդ Ը – «Համաշխարհային սրճարան»		28
5	Ուսուցման ուղղվածությունը	Փորձառություն	30
5.1	Ո՞րն է ուսուցման նպատակը		31
5.2	Մեթոդ Թ – Այցելություն քաղաքապետարան/ խորհրդարան		32
5.3	Մեթոդ Ժ – Հարցազրույց քաղաքապետի/ լրագրողի/ ոստիկանության սպայի հետ		34
	Հավելված	Աբրահամ Մասլոու	36

A large green arrow graphic pointing to the right, with a smaller green arrowhead pointing to the text.

Ուսուցման ուղղվածությունը - **Վարքագիծ**

1.1

Ո՞րն է այս ուսուցման նպատակը

Վարքագծին միտված ուսուցումը (վարքագծային մոտեցում) հիմնականում կենտրոնանում է շրջապատում առկա խթանների եւ դրանց ի պատասխան մարդկանց գործողությունների վրա:

Ըստ այս տեսության, աշակերտի վարքագիծը կարելի է փոխել կամ նպատակաուղղել՝ նրան քաջալերելով/ խթանելով պատշաճ վարքագծի: Օրինակ, եթե դուք ուզում եք ձեր աշակերտները լավ կատարեն տնային աշխատանքը, փորձեք քաջալերել/ խթանել նրանց: Գոյություն ունեն քաջալերելու բազմաթիվ մեթոդներ եւ ուղիներ, այդ թվում՝ գովելը, պարգևատրելը եւ այլն:

Տնային աշխատանքը լավ կատարելու համար քաջալերված աշակերտն ավելի ակտիվ ու նպատակաուղղված է դառնում:

Վարքագծին միտված գործընթացում հարկավոր է հաշվի առնել հետեւյալ բաղադրիչները.

- **ակտիվություն** - ակտիվությունը մեծ նշանակություն ունի, որովհետեւ արդյունավետ ուսուցումը ենթադրում է աշակերտների ակտիվ ներգրավվածություն: Այս տեսանկյունից կարելի է զարգացնել որոշ հմտություններ եւ ուսուցանել նոր գործողություններ՝ նմանակելով որոշակի իրավիճակներ եւ գործողություններ,
- **ամրապնդում եւ ընդհանրացում** - գործնական պարապմունքները կարելու են, քանի որ որոշ հմտություններ կարելի է զարգացնել միայն այդ ճանապարհով: Մեծ կարեւորություն ունեն նաեւ վարքագծի/ գործողությունների ընդհանրացումն ու վերլուծությունը,
- **աշակերտների մոտիվացիա** - աշակերտներին խրախուսել ճիշտ կատարած առաջադրանքի համար,
- **հստակորեն սահմանված եւ վարքագծին միտված ուսուցման նպատակներ** - նպատակները պետք է ընդհանրացվեն վարքագծի համատեքստում: Օրինակ՝ ուսուցիչը պետք է ուսուցման նպատակը ձեւակերպի օգտագործելով հետեւյալ բառերը. «Այս դասի ավարտին աշակերտը կկարողանա...»:

1.2 ՄԵԹՈԴ Ա Դերային խաղեր

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲԱՌԵՐ

խաղ, պատմություններ, բնութագրեր, համակարգ, իմպրովիզացիա



ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դերային խաղն ուսուցման մեթոդ է, երբ մասնակիցները ստանձնում են կերպարների դերերն ու համատեղ ստեղծում պատմություններ: Մասնակիցները որոշում են իրենց կերպարների գործողությունները, հիմնվելով վերջիններիս բնութագրող որակների վրա: Գործողությունները ծավալվում են ըստ կանոնների եւ ուղեցույցների ֆորմալ համակարգի: Այդ կանոնների շրջանակում նրանք կարող են ազատորեն ստեղծագործել: Նրանց ընտրությամբ է ձեւավորվում խաղի ընթացքն ու արդյունքը:

Դերային խաղը շատ արդյունավետ ուսուցման ձեւ է քաղաքացիական կրթության մեջ: Աշակերտները կարող են որդեգրել տարբեր մոտեցումներ եւ ուսումնասիրել, թե ինչպես են մյուս մասնակիցները հաղթահարում հիմնախնդիրները: Այս մեթոդը կարելի է լրացնել բարդ իրավիճակներով ու թեմաներով:

ՕՐԻՆԱԿ

Տարբեր համայնքների շահերի հավասարակշռում

Եթե ուզում եք քաղաքացիական կրթության դասերի ժամանակ կիրառել դերային խաղերը, դասը կարող է ընթանալ հետեւյալ կերպ:

- **Ուսումնական թեմա.** փոքրամասնության ու մեծամասնության շահերի հավասարակշռումը ժողովրդավարական երկրում:
- **Մարտահրավեր.** ըստ ժողովրդավարական սկզբունքների, փոքրամասնությունը որոշումներ չի ընդունում: Այդուհանդերձ, կարող են խնդիրներ առաջանալ, եթե փոքրամասնության շահերը հաշվի չառնվեն:

ՔԱՅԼԵՐ

- 1.** Առանձնացնել տեղական համայնքի որևէ հրատապ խնդիր: Օրինակ՝ թաղամասը մայրուղուն կապող նոր ճանապարհի կառուցման անհրաժեշտությունը:
- 2.** Տարրորշել շահագրգիռ կողմերը: Օրինակ. Ա խումբ - գյուղի այն բնակիչներ են, որոնց ճանապարհ է պետք իրենց բնակավայրը մայրուղուն կապելու համար: Նրանք ուզում են, որ իրենց երեխաները դպրոց հասնեն ավտոբուսով, ճանապարհը կոյուրացնի նաեւ իրենց աճեցրած միրգն ու բանջարեղենը շուկա հասցնելը եւ այլն: Բ խումբ - գյուղի այն բնակիչներն են, որոնց հողատարածքները կառուցվելիք ճանապարհը կբաժանի երկու մասի: Նրանցից ոմանք անհանգստանում են, որ իրենց անասունները կարող են ընկնել մեքենայի տակ, մյուսները՝ որ կվնասվեն իրենց ցանքերը:
- 3.** Առաջարկեք երեխաներին հանդես գալ շահագրգիռ կողմերի դերերում քննարկման կամ բանավեճի ընթացքում:

- 4.** Վերլուծեք արտահայտված տարբեր դիրքորոշումներն ու ձեւակերպեք եզրակացությունները: Ասենք, աշակերտները կարող են հանգել եզրակացության, որ ճանապարհն ամեն դեպքում պետք է կառուցվի, բայց փոխհատուցում պետք է ստանան անասուններ կորցրած եւ իրենց հողատարածքը ճանապարհին տրամադրած գյուղացիները:
- 5.** Ուսուցիչը պետք է քաջալերի, որպեսզի աշակերտները պարզաբանեն, թե ինչու են հանգել այս եզրակացությանը, ինչու են «անարդար» համարում փոքրամասնության շահերը հաշվի չառնելը:



ՄԵԹՈԴԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ուսուցիչը պետք է հանդես գա որպես միջնորդ՝ վերահսկելով քննարկումը:
- Աշակերտները պետք է նախապես ստանան իրենց դերերին համապատասխան հրահանգներ ու բացատրություններ:
- Տարբեր դերեր կատարելն աշակերտներին հնարավորություն է տալիս մտածել ու վերլուծել մի քանի դիրքերից: Այս մեթոդի կիրառումը նրանց թույլ է տալիս մտնել «ուրիշի մաշկի մեջ» (փոքրամասնության), ինչը զարգացնում է շրջապատն ընկալելու նրանց ունակությունը:
- Դերերը բաշխելիս ուսուցիչը պետք է համոզվի, որ աշակերտները պատշաճ կերպով վերլուծել են իրենց դերերը եւ կարող են արտահայտել տարբեր կարծիքներ:

1.3 ՄԵԹՈԴ Բ

Սուկրապեայան Երկխոսություն

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲԱՌԵՐ

Հարցադրումներ, անհատական կարծիքներ, բանավեճ, երկխոսություն

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սուկրատեսը հույն մեծ փիլիսոփա էր, հարցադրումների հմուտ վարպետ: Նա մարդկանց համոզում էր արտահայտել իրենց կարծիքը, այնուհետև հարցերով վիճարկում էր այն:

Երկխոսության իմաստը տեսակետներն ու դիրքորոշումները ճշտելն է: Լուծումներ գտնելու նպատակ չի դրվում: Սուկրատեսյան երկխոսությունը ենթադրում է մասնակիցների զրույցի որոշակի մակարդակ: Այս մեթոդի կիրառման ժամանակ հարկավոր է հաշվի առնել հետևյալ սկզբունքները.

- մի շտապեք - երկխոսությունը մտքի դանդաղ ընթացք է ենթադրում, շեշտադրված ու խորը ընկալում,
- լսեք - ուշադրությամբ լսեք մյուսներին ու փորձեք հստակ պատկերացնել նրանց դիրքորոշումները,
- հարցեր տվեք - հարցերի միջոցով ձեռավորեք ճիշտ կարծիք,
- կենտրոնացեք ձեր զրուցակցի վրա: Աշխարհին նայեք նրա աչքերով: Փորձեք նրա տեսանկյունից տեսնել աշխարհը եւ վերլուծել նրա դիրքորոշումը,
- մի մտածեք զրուցակցին հակառակ (այո, բայց...), այլ մտածեք նրա հետ միասին (այո, նաեւ...),
- մի կենտրոնացեք լուծումների վրա: Հետազոտեք խնդրի հիմքում ընկած պատճառները, հնարավոր զարգացումներն ու հեռանկարները,
- քաց եղեք նոր մտածելակերպի համար: Ձերբազատվեք հին մտածելակերպից:



ՕՐԻՆԱԿ

Սոկրատեսյան մրցություն

- **Ուսումնական թեմա.** երկխոսության ծավալում շահագրգիռ մասնակիցների հետ:
- **Մարտահրավեր.** ձեր գյուղում շատ երեխաներ են ապրում: Նրանք սպորտով զբաղվելու տեղ չունեն: Երեխաներն ուզում են մարզահրապարակ կառուցել, բայց գյուղապետը չի թույլատրել:




ՔԱՅԼԵՐ

1. Աշակերտը դասընկերներին ներկայացնում է իրավիճակը (15 րոպե): Ուսուցիչն ուղղում է հետեյալ հարցերը. ի՞նչ է եղել (փաստերը), անձամբ դու ի՞նչ ես արել (գործողությունները), ինչպե՞ս ես ընկալում, գնահատում իրավիճակը (զգացողությունը, ձեռք բերված փորձառությունը), ի՞նչ է հարկավոր անել հարցն ուսումնասիրելու համար:
2. Մյուս աշակերտները հարցեր են տալիս, որպեսզի հստակորեն հասկանան իրավիճակը (10 րոպե): Նրանք իրենց պատկերացնում են իրավիճակը ներկայացրած աշակերտի տեղում:
3. Աշակերտներից յուրաքանչյուրը ներկայացնում է, թե որ սկզբունքներն ու արժեքներն է կարելու համարում տվյալ դեպքում (10 րոպե). ի՞նչն էք համարում ամենակարևորը (եությունը), ինչպիսի՞ խիզախություն է պետք դա իրականացնելու համար, ուրիշ ի՞նչ է անհրաժեշտ:

ՄԵԹՈԴԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Սոկրատեսյան երկխոսությունը սովորեցնում է աշակերտներին ճիշտ վերլուծել իրավիճակը եւ անել կարելու հարցադրումներ: Ուսումնական պրոցեսում ներգրավվում է ամբողջ դասարանը: Աշակերտներն իրենց պատկերացնում են «ուրիշի մաշկի մեջ», ինչը զարգացնում է շրջապատն ընկալելու նրանց ունակությունը:
- Ուսուցիչը պետք է հանդես գա որպես միջնորդ՝ վերահսկելով քննարկումը:
- Աշակերտները պետք է նախապես ստանան իրենց դերերին համապատասխան հրահանգներ ու բացատրություններ:
- Այս մեթոդը որոշ նախապատրաստական աշխատանք է պահանջում ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների համար: Այլապես, սկզբնական փուլում այն կարող է անարդյունավետ լինել: Թեման կարող էք ընտրել երեխաների համար հրատապ խնդիրներից:



Ուսուցման ուղղվածությունը - **Մրաձողություն**

2.1

Ո՞րն է այս ուսուցման նպատակը

Ի տարբերություն վարքագծային մոտեցման, մտածողական մոտեցումը միտված է ճանաչողական գործընթացներին, առավելապես ուսուցանում է մտածել, եւ ոչ թե գործողությունները մոդելավորել:

Այս մոտեցումն ուսուցման ընթացքում ճանաչողական սխեմաների ձեւավորման եւ իրադարձությունները մտապահելու նպատակ է հետապնդում:

Ըստ ճանաչողական մոտեցման, մարդը սովորում է եզրակացությունները, ակնկալիքն ու իրադարձությունները կապակցելով:

Գոյություն ունեն մտածողության վրա հիմնված մոտեցման մի քանի սկզբունքներ, որոնք օգնում են բարելավել ուսումնական պրոցեսը: Դրանք ներկայացվում են ստորեւ.

- **հստակորեն մշակված ու կառուցված տեղեկատվություն** - ուսուցչի կողմից տրամադրվող ցանկացած տեղեկատվություն պետք է պատշաճ կառուցվածք ունենա: Անհրաժեշտ է, որ որոշակի կապ լինի մշակվող կարծիքի ու հավելյալ փաստարկների միջեւ, որոնք պետք է միավորվեն վերջնական գաղափարում: Դա աշակերտներին թույլ է տալիս կապակցել տեղեկատվությունն ու ավելի հեշտությամբ մշակել սխեմաները,
 - **տեղեկատվության ընկալում** - աշակերտն ընտրողաբար է ընկալում եւ վերլուծում տեղեկատվությունը, ուստի կարելու է, թե ինչպես է խնդիրը ներկայացվում ու այնուհետեւ վերլուծվում,
 - **արդեն ունեցած գիտելիք** - նոր տեղեկատվությունը պետք է մատուցվի արդեն ունեցածի հիման վրա: Օրինակ, աշակերտները որոշակի գիտելիք ունեն եվրոպական երկրների խորհրդարանական համակարգի մասին, հավելյալ դասերն ամրապնդում են իմացածն ու տալիս նոր տեղեկատվություն,
 - **ամրապնդում կամ կրկնություն** - ընդգծվում է աշակերտների առաջընթացը՝ դասի ավարտին անցկացնելով հարցում կամ ճշգրտելով թերի մատուցված տեղեկատվությունը:
- Ուսուցիչը պետք է այնպես մատուցի տեղեկատվությունը, որպեսզի աշակերտների մոտ որոշակի համակարգ մշակվի: Նա նաեւ պետք է օգնի աշակերտներին իրադարձությունները ճիշտ վերլուծելու եւ եզրահանգումներ անելու գործում:

2.2 ՄԵԹՈԴ Գ

ՊԼԵՆԱՐ զԵԿՈՒՑՈՒՄ

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲԱՌԵՐ

Վերջին զարգացումներ, պլենար զեկուցում, դասագիրք, քննարկում

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ուսուցիչը քննարկում է վերջին զարգացումները երկրում եւ այդ իրադարձությունների հիման վրա դիտարկում է ժողովրդավարության զարգացումն ու քաղաքացիական մասնակցությունը: Պլենար զեկուցման ընթացքում կարող է օգտագործվել դեմոկրատիայի որեւէ դասագիրք, իսկ մատուցումը կարելի է ավարտել հակիրճ քննարկմամբ:

Պլենար զեկուցումն ուսուցման շատ արդյունավետ ձեւ է, երբ ուսուցիչը նպատակ ունի աշակերտներին ներկայացնել համապատասխան պատմական փաստերը կամ երկրում տեղի ունեցող զարգացումները: Աշակերտները լսում են ուսուցչին, գրառումներ անում ու հարցեր տալիս: Վերջում կարելի է թեստ անցկացնել կամ բանավեճ կազմակերպել:



ՕՐԻՆԱԿ

Ուսուցչի զեկուցումը

- **Ուսումնական թեմա.** ուսումնասիրել ու ներկայացնել համապատասխան պատմական փաստերը ժողովրդավարության եւ հանրային մասնակցության մասին: Աշակերտների քաղած գիտելիքները կարելի է ստուգել հակիրճ հարցմամբ:
- **Մարտահրավեր.** դասարանին ներկայացնել որեւէ պատմական դեպք կամ վերջին զարգացումները երկրում եւ ծավալել երկխոսություն:

ՔԱՅԼԵՐ

1. Ուսուցիչը պատրաստում է 20 րոպե տեւողությամբ զեկուցում երկրում տեղի ունեցած վերջին զարգացումների, ժողովրդավարության պատմության կամ առկա քաղաքական կառուցվածքի մասին: Օգտագործվող նյութը կարելի է քաղել դասագրքից, լրագրերից կամ ինտերնետից:
2. Չեկուցումից հետո աշակերտները կարող են հարցեր տալ:
3. Աշակերտներին բաժանվում են թեստեր ժողովրդավարության մասին հարցերով, օրինակ հին հունական կամ հռոմեական ժողովրդավարության մասին՝ կազմված դասագրքի նյութի հիման վրա:

ՄԵԹՈԴԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Պլենար զեկուցումների ժամանակ աշակերտները թեմային վերաբերող ճշգրիտ ու մանրամասն տեղեկատվություն են ստանում: Այս մեթոդն աշակերտներին հնարավորություն է տալիս վերլուծել որոշակի թեմաներ:
- Պլենար զեկուցումները կիրառել ցանկացող ուսուցիչները պետք է Նախօրոք պատրաստվեն: Բացի դրանից, հարկավոր է պարզաբանումներ ու բացատրություններ տալ աշակերտներին իրենց դերակատարության վերաբերյալ:



2.3 ՄԵԹՈՂ Դ

Երեւակայություն

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲԱՌԵՐ

Իղձ, երեւակայություն, ընկալում, պատմություն

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երեւակայությունն ուսուցման շատ զորեղ միջոց է: Այն օգնում է աշակերտներին պատկերացնել, թե իրենք ինչպես են ընկալում հիմնախնդիրները կամ իրավիճակները: Այն նաեւ աշակերտներին մղում է դիտարկել անցած պատմությունը եւ պատկերացնել, թե ինչպիսին կարող էր լինել իրենց կյանքը:



ՕՐԻՆԱԿ

Պատկերացրեք, որ ապրում եք Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ

- **Ուսումնական թեմա.** Ներկայացնել Երկրորդ համաշխարհային պատերազմի վերաբերյալ տեղեկություններ եւ դիտարկել դրանք:
- **Մարտահրավեր.** Նրանց հանձնարարվում է պատկերացնել, որ հայտնվել են որոշակի իրավիճակում, օրինակ՝ ապրում են Գերմանիայում Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, եւ գրի առնել կամ քննարկել, թե ինչ են մտածում այդ մասին:

ՔԱՅԼԵՐ

1. Ուսուցիչը պլենար զեկույց է ներկայացնում Երկրորդ համաշխարհային պատերազմի վերաբերյալ:
2. Աշակերտներն իրենց պատկերացնում են որոշակի իրավիճակում:
3. Աշակերտները փոքրիկ շարադրություններ են գրում այդ իրավիճակի վերաբերյալ:
4. Ուսուցիչն ընտրում է դրանցից երկուսը եւ ընթերցում դասարանում:



ՄԵԹՈԴԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները ճշգրիտ ու մանրամասն տեղեկատվություն են ստանում թեմայի վերաբերյալ: Բացի այդ, նրանք լսում են տարբեր կարծիքներ ու վերլուծում են փաստեր:
- Որպեսզի աշակերտները պատրաստ լինեն երեւակայության մեթոդով անցկացվող դասին, նրանց հարկավոր է նախապես պատրաստել: Բացի այդ, հարկավոր է իրենց դերակատարության վերաբերյալ պարզաբանումներ ու բացատրություններ տալ աշակերտներին:
- Չգույշ եղեք պատերազմի կամ տարածաշրջանային հակամարտության վերաբերյալ թեմա ընտրելիս, քանի որ դասարանում կարող են լինել տարբեր ազգությունների ներկայացուցիչներ: Դա կարող է հանգեցնել անձնական բախումների:



Ուսուցման ուղղվածությունը - **Զարգացում**

3.1

Ո՞րն է այս ուսուցման նպատակը

Այն օժանդակում է անձի դրսևորմանը, ինքնիրացմանը եւ անձնական առավելագույն ներուժի բացահայտմանը: Շեշտադրվում է զգացողությունների, զգացումների եւ ընտրության իրավունքի կարելությունը: Նշյալ բաղադրիչները պետք է ուժեղացվեն զարգացման մեթոդի կիրառմամբ:

Անհատական զարգացման այս միտումը կենտրոնանում է մարդկային գերագույն պահանջմունքի՝ ինքնարտահայտման, մարդկային ունակությունների ու հմտությունների լիակատար իրացման վրա:

Ինքնարտահայտումն անհատի գերագույն մղումներից է: Այն ենթադրում է անհատական զարգացման ամենաբարձր մակարդակը: Դրան կարելի է հասնել, եթե բավարարված են մյուս հիմնարար պահանջմունքները եւ հնարավորություն

կա դրսևորել անհատի ամբողջ պոտենցիալը (տես հավելվածը էջ՝ 37):

Ինքնարտահայտման համար անհրաժեշտ է այնպիսի միջավայր, որտեղ անհատն ամբողջությամբ կարող է բացահայտել իր ունակությունները: Դա ենթադրում է անհատի լիակատար ներգրավում ու մոտիվացիա: Ուսուցումը ներառում է ներքոնշյալ բաղադրիչները.

- **անհատի ներգրավում** - անհատն ամբողջությամբ, բանականությամբ ու զգացմունքներով ներգրավված է ուսումնական պրոցեսում,
- **նախաձեռնություն** - կարելոր է, որ անհատի մոտիվացիան խթանվի արտաքին գործոններով: Անգամ հմտությունները դրսևորելու համար նպատակահարմար միջավայրում նախաձեռնությունը կարող է ածանցվել ներքին պահանջմունքներից եւ արթնացնել ուսումնասիրության ծարավ,
- **ուսումնական պրոցեսի գնահատումը աշակերտի կողմից** - աշակերտներից յուրաքանչյուրը գնահատում է ուսման ընթացքում ստացած տեղեկատվության օգտակարությունը, անհրաժեշտությունը կամ անկարելությունը:

3.2 ՄԵԹՈԴ Ե

Քաղաքական մանիֆեստ

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲԱՌԵՐ

Փոքր խմբեր, գրառել անհատական քաղաքական հեռանկարը, բանավեճ, լուծումներ, կոալիցիաների ձևավորում

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշակերտներն աշխատում են փոքր խմբերով եւ տարրորոշում հիմնախնդիրներն իրենց բնակավայրում: Գրի են առնում հիմնախնդրի վերաբերյալ իրենց քաղաքական մանիֆեստը: Փոքր խմբերում բանավիճում են իրենց քաղաքական մանիֆեստների ու տարբեր լուծումների շուրջ եւ, եթե հնարավոր է՝ ձևավորում կոալիցիաներ:



ՕՐԻՆԱԿ

Ի՞նչ եք կարծում

- **Ուսումնական թեմա.** երեւան հանել տարբեր քաղաքական գաղափարախոսությունները եւ քննարկել նմանություններն ու տարբերությունները:
- **Մարտահրավեր.** դժվար է փոխել այն, ինչն աշակերտները կարելի է համարում: Մարտահրավերն այստեղ աշակերտներին համոզելն է, որ մարդիկ կարող են ունենալ տարբեր կարծիքներ, տարբեր հավատամք, եւ դա նորմալ է:

ՔԱՅԼԵՐ

1. Հասարակության հիմնախնդիրներից առանձնացնել մի քանիսը եւ աշակերտներին առաջարկել գրավոր շարադրել իրենց քաղաքական մանիֆեստները: Այնուհետեւ փոքր խմբերը ծանոթանում են կատարված աշխատանքներին:
2. Առանձնացնել նմանություններն ու տարբերությունները, դրանք գրի առնել գրատախտակին:
3. Ուսուցիչը խրախուսում է երկու լավագույն մանիֆեստների հեղինակներին:

ՄԵԹՈԴԻ ՈւԺԵՂ ԵՎ ԹՈւՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտն ընդգրկվում է ուսումնական պրոցեսում եւ սովորում է ձեւակերպել ու հիմնավորել սեփական կարծիքը:
- Գործնական աշխատանքն իրականացնելու համար ուսուցիչը պետք է նախապես վերապատրաստվի: Նա պետք է մանրամասնորեն բացատրի աշակերտներին, թե ինչպես պետք է կատարել այդ աշխատանքը (օրինակ՝ թե ինչպես պետք է ներկայացնել մանիֆեստները):

3.3 ՄԵԹՈԴ 2


Գտիր «քոնը»

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲԱՌԵՐ

Խթանել խմբային զրույցը, առաքելություն, ուսումնասիրություն, հարցերի ուղղում, պատասխաններ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս մեթոդի նպատակն աշակերտների միջև իրենց ունակությունների ու ձգտումների մասին խմբային զրույցները խթանելն է. ի՞նչով են իսկապես ուզում զբաղվել կյանքում, ո՞րն է իրենց «առաքելությունը»: Ուսումնասիրելով այս թեմաները՝ աշակերտները տեղեկանում են միմյանց ուժեղ կողմերին, ձգտումներին ու երազանքներին:



ՕՐԻՆԱԿ

Ո՞րն է «քոնը»

- **Ուսումնական թեմա.** անձնական ձգտումներն ու երազանքները կապակցել երկրում տեղի ունեցող զարգացումներին եւ ուսումնասիրել, թե ինչպես են փոխկապակցվում քո անձնական ու երկրի զարգացումը:
- **Մարտահրավեր.** մարտահրավերն այստեղ սեփական ձգտումներն ու երազանքները որոշելն ու դրանք երկրի զարգացմանը կապակցելն է: Ինչպե՞ս կարող է աշակերտն օգտակար լինել սեփական երկրին:

ՔԱՅԼԵՐ

- 1.** Աշակերտներին հանձնարարվում է աշխատել երեք հոգանոց խմբերով: Նրանք միմյանց հարցեր են տալիս եւ գրի առնում պատասխանները: Այնուհետեւ պատասխանները համատեղ քննարկվում են:
Միմյանց ուղղվող հարցերը.
Ի՞նչ ես ուզում դառնալ, երբ մեծանաս, ինչո՞վ կուզենայիր զբաղվել, ի՞նչն ես լավ անում:
- 2.** Հարցեր տվող աշակերտը գրի է առնում պատասխանները, իսկ այնուհետեւ մյուս երկու աշակերտներն ընդհանրացնում են եզրակացությունները:
- 3.** Վարժության ավարտին ուսուցիչն անդրադառնում է հարցուպատասխանին՝ հե՞շտ էր, թե՞ դժվար:

ՄԵԹՈԴԻ ՈւԺԵՂ ԵՎ ԹՈւՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտն ընդգրկվում է ուսումնական պրոցեսում եւ սովորում է ձեւակերպել ու հիմնավորել սեփական կարծիքը:
- Աշակերտները վերլուծում են իրենց հետաքրքրությունները:
- Աշակերտների հետաքրքրությունների շրջանակն օրեցօր ընդլայնվում է: Ուսուցիչը պետք է հաճախ հետաքրքրվի, թե ինչպիսի փոփոխությունների են ենթարկվել աշակերտների հետաքրքրությունները:



Ուսուցման ուղղվածությունը - **Համագործակցություն**

4.1

Ո՞րն է այս ուսուցման նպատակը

Ուսուցումը միտված է նրան, որ մարդիկ սովորում են միմյանցից: Այս ուսումնական պրոցեսը հիմնված է ուշադրության, իրավիճակների մոդելավորման ու նմանակման վրա:

Մարդիկ տեղեկատվություն են ստանում ու սովորում են կատարել որոշակի գործողություններ՝ հետեւելով միմյանց վարքագծին: Նպատակը խելամիտ համագործակցությունը, հարաբերությունները հնարավոր դարձնելն է:

Ուսուցիչը պետք է հատուկ ուշադրություն դարձնի աշակերտների միջեւ հարաբերությունների հաստատմանը եւ նրանց կողմից իրավիճակների պատշաճ վերլուծությանը: Ուսուցիչը պետք է նպաստի վերոնշյալին, բայց չպետք է ակտիվորեն ներգրավվի բանավեճերում: Նա ներկա է եւ վարում է քննարկումները:

Ներխմբային դինամիկային ու համագործակցությանն ավելի շատ ուշադրություն է հատկացվում, քան անհատին:

Դասի ավարտին ուսուցիչն ամփոփում է կատարվածը՝ աշակերտներին օգնելով ճիշտ վերլուծել իրավիճակը:

Օրինակ՝ ուսուցիչը ներկայացնում է իրավիճակի մոդելավորումը (ասենք, խորհրդարանական քննարկումներ) եւ աշակերտներին խրախուսում է կիսել տեղեկատվությունն ու հետեւել միմյանց վարքագծին:

4.2 ՄԵԹՈԴ Է


Քննարկում բրիտանական խորհրդարանում

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲԱՌԵՐ

Քննարկում, բանավեճ, գործակցություն,
ընդհանրացում, վարում

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բրիտանական խորհրդարանը ժողովրդավարության եւ աշխույժ քննարկումների հայտնի օրինակ է: Տարբեր խմբերի միջեւ տեղի են ունենում բուն քննարկումներ, որոնց ընթացքում անհատները պաշտպանում են իրենց դիրքորոշումները: Նիստը վարողը հետեւում է, որ մարդիկ չընդհատեն միմյանց, գործում են միմյանց լսելու ու բանավիճելու խիստ կանոններ: Բանավեճի ընթացքում կրքերը կարող են խիստ բորբոքվել: Երբեմն խորհրդարանի անդամները բարկանում են իրենց ընդդիմախոսների վրա, բայց խորհրդարանի շենքից դուրս նրանք միշտ բարեկիրթ են միմյանց նկատմամբ: Քննարկումները բովանդակությանն են վերաբերում, ոչ թե անձերին:



ՕՐԻՆԱԿ

Չամոզել ընդդիմախոսին


- **Ուսումնական թեմա.** բանավեճը դասընկերների հետ եւ տարբեր դերերում հանդես գալը (դիտորդ, կողմ եւ դեմ):
- **Մարտահրավեր.** կարո՞ղ եմ աշակերտներն իրենց դասընկերների հետ բուռն քննարկումներ անցկացնել եւ միաժամանակ հանդես գալ տարբեր դերերում:

ՔԱՅԼԵՐ

- 1.** Ուսուցիչը դասը սկսում է հաղորդակցության եւ բանավեճի կանոնները բացատրելուց:
- 2.** Ձեւավորվում է երեք խումբ՝ դիտորդներ, կողմ եւ դեմ:
- 3.** Ուսուցիչը ներկայացնում է երեք թեմաները, որոնցից սկսվելու է բանավեճը:
- 4.** Բանավեճի ավարտին ուսուցիչը հետաքրքրվում է, թե ի՞նչ տպավորություն ստացան աշակերտները, ո՞ր դերը նրանց ավելի դուր եկավ եւ ի՞նչը կուզենային բարելավել:

ՄԵԹՈԴԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Այս մեթոդի կիրառմամբ աշակերտները սովորում են հստակորեն հիմնավորել իրենց կարծիքները եւ ներկայացնել փաստարկներ:
- Գործնական աշխատանքի ժամանակ ուսուցիչը պետք է վարի քննարկումն ու ղեկավարի աշակերտների գործողությունները:



4.3 ՄԵԹՈԴ Ը


«Համաշխարհային սրճարան»

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲԱՌԵՐ

Աշխուժություն, քննարկումներ, ռոտացիա

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Համաշխարհային սրճարանը» տարբեր թեմաներ քննարկելու շատ արդյունավետ ձև է: Այն շարժուն, աշխույժ ձև է, քանի որ աշակերտներն ազատ կերպով տեղաշարժվում են դասասենյակում: Դասասենյակը պետք է կահավորվի որպես սրճարան. սեղաններ՝ շրջապատված աթոռներով: Սեղանի մոտ նստած է «մշտական հաճախորդը»: Նա նստած է մնալու վարժության ողջ ընթացքում: Մյուս աշակերտները մոտենում են սեղանին չորս կամ հինգ խաղափուլերի ընթացքում: Սեղանի վրա դրվում է տետր կամ մեծ չափերի թուղթ: Խաղափուլերի մասնակից աշակերտները քննարկում են թեման ու դրա շուրջ իրենց գաղափարներն ու առաջարկությունները գրի են առնում տետրում կամ թղթի վրա: Խաղափուլը տեւում է 15 րոպե: Հետո աշակերտները փոխում են իրենց տեղերը խմբերում: Անփոփոխ է մնում միայն «մշտական հաճախորդը»: Նա հետեւում է, որ երկրորդ քննարկումը շարունակվի առաջինի հիման վրա: Նա ընդհանրացնում է առաջին շրջանի արդյունքները եւ առաջարկում աշակերտներին շարունակել:



ՕՐԻՆԱԿ

Ո՞վ կամ ի՞նչ

- **Ուսումնական թեմա.** դասընկերների հնարավորությունների ուսումնասիրում, ժողովրդավարական համակարգի առանձին նորմերի քննարկում, փոխգործակցություն:
- **Մարտահրավեր.** այս աշխատանքում աշակերտները կկանգնեն միմյանց փոխլրացնելու խնդրի առջև: Վարժությունն անօգուտ կլինի, եթե տարբեր շրջափուլերում ընթանան նույն քննարկումները: Այն օգտակար է միայն այն դեպքում, երբ քննարկումները հաջորդաբար հիմնվում են մեկը մյուսի վրա:

ՔԱՅԼԵՐ

1. Դասասենյակը կահավորեք որպես սրճարան՝ 4-5 աթոռներով շրջապատված սեղաններով: Բոլոր աշակերտները պետք է նստելու տեղ ունենան: Յուրաքանչյուր սեղանին պետք է լինի թուղթ ու գրիչ: Աշակերտներից մի քանիսին հանձնարարեք «Մշտական հաճախորդների» դերը: Խաղափուլերի ընթացքում նրանք չեն փոխում իրենց տեղերը:
2. Սեղաններից յուրաքանչյուրի թերթիկին գրի առեք այն առանցքային հարցերը, որոնք կապված են ձեր երկրում որեւէ զարգացման հետ: Գրեք դրույթի տեսքով՝ 18 տարեկանից բարձր բոլոր մարդիկ պետք է ունենան ընտրելու իրավունք: Խմբերը այդ դրույթը քննարկում են 15 րոպե, գալիս կամ չեն գալիս համաձայնության:
3. 15 րոպե հետո աշակերտները փոխում են սեղանները: Խումբն ամբողջությամբ պետք է անցնի հաջորդ սեղանին, որտեղ քննարկելու են մեկ այլ դրույթ: Քննարկման ժամանակ նրանք պետք է հիմնվեն այդ սեղանի շուրջ նախորդ քննարկման արդյունքների վրա:
4. «Մշտական հաճախորդն» ամփոփում է առաջին խմբի քննարկումը, եւ աշակերտները կրկնում են գործընթացը:

Կրկնեք 4-5 անգամ:

ՄԵԹՈԴԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Այս մեթոդի կիրառումը թույլ է տալիս աշակերտներին սովորել, թե ինչպես պետք է վերլուծել ու ընդհանրացնել դասընկերների եզրահանգումները, ինչպես զարգացնել դրանք:
- Այս մեթոդը ենթադրում է աշակերտների ակտիվություն, ուստի ուսուցիչը պետք է վերահսկի աշակերտների խոսակցությունները:
- Մեթոդի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է, որպեսզի թեմաներն ընտրվեն նախապես, եւ աշակերտները դրանց վերաբերյալ ունենան սեփական կարծիքը:



Ուսուցման ուղղվածությունը - **Փորձառություն**

5.1

Ո՞րն է այս ուսուցման նպատակը

Կյանքը փորձի, փորձառության հանրագումար է: Սովորել՝ նշանակում է իմաստ քաղել փորձառությունից: Փորձառության վրա հիմնված ուսուցումը հենվում է ուրիշների փորձառությունն ուսումնասիրելու, վերլուծելու, սեփական եւ ուրիշների փորձից դասեր քաղելու վրա:

Ուսուցիչն օգնում է աշակերտներին ճիշտ վերլուծել փորձառությունը եւ ուղղորդում է հաջորդող գործողություններում:

Օրինակ, առաջարկեք աշակերտներին պատմել իրենց ընտանիքներում կամ ընկերների հետ տեղի ունեցած կարեւոր իրադարձությունների մասին: Դա, անկասկած, ուսանելի կլինի մյուսների համար:

Ուղղեք հետեւյալ հարցերը.

- Ո՞ր գործոնն էր առավել ոգեւորել նրանց:
- Ի՞նչը հետաքրքրեց:
- Ի՞նչն էր անհետաքրքիր:
- Ի՞նչը կավելացնեին կամ կբարելավեին:
- Ի՞նչու կկատարեին հենց այդ փոփոխությունները:
- Ինչի՞ կհանգեցնեն այդ փոփոխությունները:

Մեկնաբանեք հարցուպատասխանի արդյունքները եւ ամփոփեք աշակերտների ներկայացրած տեղեկատվությունը:

Փորձառության վրա հիմնված ուսուցումը հենվում է խորապես սուբյեկտիվ գործոնների վրա, քանի որ իրավիճակի ընկալումն ու վերլուծությունը խիստ անհատական է:

Ուսուցչի դերն իրադարձությունները ճիշտ կերպով պարզաբանելն է, վերլուծելն ու փորձառությունը ձեւակերպելը:

5.2 ՄԵԹՈԴԹ

Այցելություն քաղաքապետարան/ խորհրդարան

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲԱՌԵՐ

Փորձառություն, այց, գրույց

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այցելությունները սոր վայրեր հաճախ օգտակար փորձ են ավելացնում: Կարելի է, որ այցելությունների ընթացքում տեսնում ես այլ մարդկանց, այլ իրողություններ: Ժողովրդավարության վերաբերյալ փորձառություն ձեռք բերելու համար կարելի է այցելել վայրեր, որոնք որոշիչ են ժողովրդավարության համար: Օրինակ՝ քաղաքապետարան կամ խորհրդարան: Ժողովրդավարությանը կամ քաղաքացիական մասնակցությանն առնչվող վայրի այցելությունը հաճախ տալիս է բացառիկ փորձառություն: Աշակերտները տեսնում են, թե ինչպես է ժողովրդավարությունը գործում:



ՕՐԻՆԱԿ

Ժողովրդավարություն

- **Ուսումնական թեմա.** Ժողովրդավարության համար կարևոր վայրեր:
- **Մարտահրավեր.** այցելություն ժողովրդավարության կարևոր վայրերն ու համապատասխան հարցերի քննարկում:

ՔԱՅԼԵՐ

- 1.** Քաղաքապետարան կամ խորհրդարան այցելության կազմակերպում:
- 2.** Հանդիպմանը նախապատրաստվեք աշակերտների հետ միասին.
 - Ի՞նչ եք ուզում, որ երեխաները տեսնեն:
 - Երեխաների հետ միասին կազմեք հարցերը:
- 3.** Բուն այցելությունն ու հարցերի քննարկումը:



5.3 ՄԵԹՈՂԺ

Հարցազրույց քաղաքապետի/ լրագրողի/ ուստիկանության սպայի հետ

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲԱՌԵՐ

Երկխոսություն, փորձառություն,
լրագրություն

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հարցազրույցների ճշող մեծամասնության
դեպքում հարցերն ուղղում են
լրագրողները: Փոխենք դերերն ու տեսենք,
թե կարո՞ղ են արդյոք աշակերտները
հարցազրույց անցկացնել լրագրողի հետ:
Կարող են տրվել այսպիսի հարցեր.

- Ո՞րն է ձեր աշխատանքի էությունը:
- Ինչո՞ւ ընտրեցիք լրագրողի
մասնագիտությունը:
- Ի՞նչն է ձեր աշխատանքում
ամենահրապուրիչը:

Ժողովրդավարական գործընթացին
մասնակից անձնավորության հետ
հարցազրույցը կարելի է վարժություն է
աշակերտների համար: Նրանք ոչ միայն
սովորում, այլև իրականացնում են
ժողովրդավարություն:



ՕՐԻՆԱԿ

Չարցրու լրագրողին


- **Ուսումնական թեմա.** աշակերտները զարգացնում են հարցեր տալու հմտությունները եւ տեղեկանում ժողովրդավարական գործընթացներում ներգրավված մարդկանց դերակատարության մասին:
- **Մարտահրավեր.** տալ այնպիսի հարցեր, որոնք կհանգեցնեն այն պատասխաններին, որոնք ուզում եք լսել:

ՔԱՅԼԵՐ

1. Կազմակերպել հարցազրույց լրագրողի, քաղաքապետի կամ ոստիկանության սպայի հետ:
2. Աշակերտները գրի են առնում հարցերը, որոնք ուզում են ուղղել լրագրողին, քաղաքապետին կամ ոստիկանության սպային:
3. Աշակերտները համատեղ քննարկում են հարցերը:
4. Կազմվում է հարցերի վերջնական ցուցակը:
5. Չարցազրույցից հետո դրա արդյունքները հրապարակվում են դպրոցում:

ՄԵԹՈԴԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Նման միջոցառում կազմակերպելը ձեր քաղաքում կամ շրջանում կարող է կապված լինել դժվարությունների հետ: Նկատի ունեցեք, որ գործողություններն ունեն նաեւ խորհրդանշական իմաստ. չափազանց կարեւոր է այցելել այն վայրերը, որտեղ ժողովրդավարությունն ու քաղաքացիական մասնակցությունը մեծ նշանակություն ունեն:
- Անպայման նախապատրաստեք լրագրողին կամ ոստիկանության սպային ուղղվելիք հարցերը: Այլապես աշակերտներն այդ հանդիպումներից որեւէ օգուտ չեն քաղի:





Հավելված

Աբրահամ Մասլոու

Անձին վերաբերող տեսությունները հաճախ բաժանում են երեք հիմնական կարգերի.

1. հոգեվերլուծություն - մարդուն դիտարկում է որպես բնագոյային ու ներհոգեկան հակասություններով արարածի,

2. վարքաբանություն - ներկայացնում է անհատին որպես արտաքին ազդակներին ենթակա պասիվ գոհի,

3. հումանիստական հոգեբանություն - ամենաերիտասարդ ուղղությունը հոգեբանության մեջ (հաճախ այն անվանում են երրորդ ուժ): Այս ուղղությունը միանգամայն այլ կերպ է հետազոտում անհատին եւ սահմանում է, որ մարդը բարի, ակտիվ, ստեղծագործ արարած է, ով ձգտում է կատարելության եւ ունի ընտրության իրավունք: Հումանիստական տեսությունը շեշտում է մարդու սուբյեկտիվ դերը եւ սեփական կյանքն ինքնուրույն կառուցելու կարողությունը (մարդու էքզիստենցիալ ընկալումը):

Աբրահամ Մասլոուն, ով հումանիստական հոգեբանության ազդեցիկ ներկայացուցիչներից է, համարում է,

որ «մարդն այնպիսին է, ինչպիսին ինքն է ստեղծել իրեն», ունի ընտրության իրավունք եւ պատասխանատու է սեփական գործողությունների համար: Մասլոուն մեջբերում է Ժան-Պոլ Սարտրի խոսքերը. «Ես այն եմ, ինչ ընտրել եմ»: Անհատը միշտ ձգտում է կատարելության եւ անդադար որոնումների մեջ է: Սա է Մասլոուի տեսության նկատմամբ ընդհանուր ընկալումը, իսկ նրա ստեղծած ամենահայտնի հոգեբանական մոդելը պահանջմունքների հիերարխիան է:

Ըստ Մասլոուի, մարդկային պահանջմունքները բնագոյային են եւ դասակարգված են բուրգի տեսք ունեցող հիերարխիկ համակարգում: Դրանք ունեն հետեւյալ դասավորությունը.

- Ֆիզիոլոգիական պահանջմունքներ,
- ապահովություն,
- կարոտ եւ սեր,
- հարգանք,
- ինքնիրացում կամ անձնական կատարելություն:



Դոմինանտ պահանջմունքները տեղակայված են բուրգի ստորին մակարդակում, եւ, բնականաբար, ավելի բարձր մակարդակի պահանջմունքները չեն կարող բավարարվել, եթե բավարարված չեն ստորին մակարդակում տեղակայվածները: Օրինակ, ֆիզիոլոգիական պահանջմունքները պետք է բավարարված լինեն, որպեսզի ձեւավորվեն ապահովության պահանջմունքները եւ այլն: Ըստ Մասլոուի, հիերարխիկ այս մոդելն ընդհանուր է բոլոր մարդկանց համար: Որքան բարձր մակարդակի վրա են մարդու պահանջմունքները, այնքան կայուն ու հաստատուն է նա անձնապես ու ֆիզիկապես:

Մասլոուն շեշտում է, որ որոշ մարդիկ չեն համապատասխանում այս կառուցվածքին: Չնայած սննդի եւ այլ հիմնական պահանջմունքների չբավարարված լինելուն՝ նրանք գլուխգործոցներ են ստեղծում գեղանկարչության, գրականության կամ գիտության բնագավառում: Ըստ Մասլոուի, կախված կենսակերպից, որոշ անհատներ ստեղծում են պահանջմունքների սեփական հիերարխիան (օրինակ, վանականները):

Մասլոուի տեսության առանցքային դրույթներից է այն, որ պահանջմունքները երբեք չեն բավարարվում «ամեն ինչ կամ ոչինչ» սկզբունքով: Պահանջմունքները հաճախ միահյուսվում են, եւ անհատը միաժամանակ երկու կամ ավելի մակարդակների պահանջմունքների բավարարման խնդիր է ունենում: Օրինակ, 85 տոկոս ֆիզիոլոգիական, 70 տոկոս ապահովության, 50 տոկոս սիրո եւ այլն:

Անհատը ոչ թե առանձին-առանձին, այլ որպես մի ամբողջություն է բավարարում իր պահանջմունքները: Զննարկենք պահանջմունքներն ըստ մակարդակների:

Ֆիզիոլոգիական պահանջմունքներ

Ֆիզիոլոգիական պահանջմունքները հիմնականում ակնհայտ են. դրանք բառացիորեն անհրաժեշտ են կենսապահովման համար՝ սնունդ, ջուր, օդ, ֆիզիկական ակտիվություն: Եթե այս պահանջմունքները չբավարարվեն, մարդու մարմինը չի կարող շարունակել գործել:

Ապահովության պահանջմունքներ

Սրանք ենթադրում են կայունության, կարգուկանոնի եւ արդարության պահանջմունքները: Ապահովության պահանջմունքներն ամենակարեւորն են ֆիզիոլոգիականների բավարարումից հետո: Այս պահանջմունքը հատկապես ցայտուն է դրսեւորվում երեխաների մոտ. նրանք իրենց ավելի լավ են զգում ընտանեկան շրջապատում, որտեղ իրավիճակը շատ թե քիչ կարգավորված է ու կազմակերպված: Եթե այդ տարրերը բացակայում են, երեխան իրեն անապահով է զգում, լալիս է ու նյարդայնանում:

Խաղաղության պայմաններում մարդիկ չեն կարող վերլուծել ապահովության կարեւորությունը: Այս պահանջմունքը հատկապես ուժեղ է հանցագործություն կատարած ու օրենքով հետապնդվող մարդկանց մոտ:

Սեր եւ կարոտ

Սիրո պահանջմունքը կարելոր դեր է խաղում մեր կյանքում: Մասլոուն սերը բաժանում է երկու կարգի.

- **ինչ-որ բանի պակասով պայմանավորված սեր**, որն առաջանում է այդ պակասը լրացնելու ձգտումից, օրինակ, գնահատվել կամ սեռական հարաբերություններ ունենալ մեկի հետ, ում ընկերակցությամբ ձեզ մենակ չեք զգում: Սիրո այս տեսակն ունի եսասիրական սիրո տարրեր,
- **սովորական սեր** - դա ոչ-եսասիրական սերն է, երբ մարդը ձգտում է բավարարել ուրիշներին: Այսպիսի զգացումը հարստացնում ու ոգեշնչում է անհատին: Այն գերծ է եսասիրական միտումներից: Մասլոուն քննադատում է Ֆրոյդի տեսակետը, թե սերն ու կիրքը նույնական են: Մասլոուի համար սերը սեքսի սինդրոմ չէ, այն շատ ավելի բարձր զգացմունք է:

Հարգանք

Բաղկացած է երկու տեսակներից.

- **ինքնագնահատում**, այն է՝ իրազեկություն, նվաճումներ, ինքնավստահություն, անկախություն,
- **հարգանք այլոց նկատմամբ** - հեղինակություն, կարգավիճակ, ճանաչում:

Ինքնիրացում

Եթե վերոնշյալ պահանջմունքները քիչ թե շատ բավարարված են, գլուխ է բարձրացնում ինքնիրացման միտումը, որը Մասլոուն սահմանում է որպես մարդու ձգտում «դառնալու այն, ինչ կարող է» («մարդը պետք է լինի այն, ինչ կարող է»), օրինակ՝ օգտագործել իր ունակությունները: Մասլոուն արձանագրում է. «Երաժիշտը պետք է նվագի, բանաստեղծը՝ գրի, գեղանկարիչը՝ նկարի. մարդիկ պետք է նվիրվեն իրենց բնատուր ունակություններին»: Բայց եթե ինքնիրացումն այդքան կարելոր է, ինչո՞ւ

Է այդքան դժվարհասանելի: Մասլոուի կարծիքով, մարդկանց մեծամասնությունը կարիք ունի ներքին կատարելության ու ձգտում է դրան, բայց նրանց միայն մեկ տոկոսն է հասնում այդ նպատակին:



Երաշխավորված Է ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի կողմից

Պիտերյան Վինյարդեն, Չիպ դե Յոնգ, Թեոնա Կուպատաձե
Քաղաքացիական կրթություն
Մեթոդական ուղեցույց ուսուցիչների համար
Առաջին հրատարակություն, Երեւան, 2010

© Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ
Գիրքը համարվում է Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի սեփականությունը

Թարգմանությունը՝ Լենիդ Չուլֆուգարյանի
Ձեւավորումը՝ www.virgam.wordpress.com
Նկարազարդումը՝ Սոֆո Կիրտաձեի
Էջադրումը՝ Օթար Կարալաշվիլիի

Տպագրությունը իրականացվել է «ԱՍՈՂԻԿ» ՍՊԸ-ի կողմից

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից